ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 5-Ա
20 փետրվարի 2014թ.

ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3)-րդ կետով, 62-րդ հոդվածով, համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

Կապան քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կատարել հետևյալ հատկացումները.

1. «Կապան» բարեգործական հիմնադրամին, որպես համայնքի ներդրում ընդամենը 14515,0 հազ. դրամ (տասնչորս միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար), որից Կապան քաղաքի բազմաբնակարան շենքերի մարդատար վերելակների վերանորոգման աշխատանքների ֆինանսավորման համար՝ 6000,0 հազ. դրամ (վեց միլիոն), Կապանի թիվ 6 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների ֆինանսավորման համար՝ 6815,0 հազ. դրամ (վեց միլիոն ութ հարյուր տասնհինգ հազար) և գույքի ձեռք բերման համար՝ 1700,0 հազ. դրամ (մեկ միլիոն յոթ հարյուր հազար):
2. Կապանի թիվ 4 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ին, որպես կապիտալ դրամաշնորհ սառնարան ձեռք բերելու համար՝ 265,0 հազ. դրամ (երկու հարյուր վաթսունհինգ հազար):
3. Կապանի 11 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ին, որպես կապիտալ դրամաշնորհ սառնարան ձեռք բերելու համար՝ 235,0 հազ. դրամ (երկու հարյուր երեսունհինգ հազար):

4. Կապան քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի իրականացման աշխատանքների համար՝ 6000,0 հազ. դրամ (վեց միլիոն դրամ):

Կողմ (10)՝

ՎԻԼԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ	ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԱՐԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ	ԺԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՐՍԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ԿԱՐԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ
ՄՈՒՐԱԴ ՄԵԼԻՔՅԱՆ	ՎԱՀԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՄՀԵՐ ՄԻՐԶՈՅԱՆ	ԱՐԹՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2014 թ փետրվարի 20

ք. Կապան